



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ԸԱԲԱԹ 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1862

ԹԻՒ 691

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՒՌՆԻԱ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Մեծին իրիտանիոյ կառավարութիւնը պաշտօնաւ կան կերպիւ իմաց տուաւ Ներքինիոյ մեծ տէրութեանց՝ թէ ինքը որոշած է Յօնիական եօթը կղզեաց պաշտպանութիւնը թողուլ և միաւորել զանոնք Յունաստանի տէրութեանը հետ, եթէ վէնայի մէջ 1815ին հաստատուած դաշնագրութեան ստորագրող տէրութիւնները, այսինքն Վաղղիան, Ռուսիան, Աստրիան, Բրաւիան, Սաքսիան, Բարթոնիալը և Սուեդիան հաճութիւն տալու ըլլան։ Վանդի գիտեւորածն է թէ յիշեալ դաշնագրութեամբ Յօնիական կղզեաց պաշտպանութիւնը Մեծին իրիտանիոյ տէրութեանը յանձնուեցաւ 1815ին։

Այս դործոյն կարգադրութեանը համար, այսինքն Յօնիական կղզիները Յունաստանի թաղաւորութիւնը հետ միաւորելու համար, Անգղիոյ կառավարութիւնը հրաւիրած է վէնայի դաշնագրութեանը ստորագրող յիշեալ տէրութիւնները՝ որ ի խորհրդակցութիւն գումարուին 1 յոստոնի մէջ։

Անգղիան իւր սովորական վեհաժողովութեամբ, որիւ յայտնաւ մը չէ գրած Յունաստանի թաղաւորութեանը ի փոխարէն թող տալուն անոր զհօնիական կղզիները, բայց միայն կը պահանջէ որ Յունաստանը հաստատուն պահէ միապետական կառավարութեան սկզբունքը և հաստատուած դաշնագրութիւնները, նմանապէս զբարեկամական յարաբերութիւնները՝ զորս ունի օտար տէրութեանց հետ և մանաւանդ իւր գրացի տէրութեանը հետ։

Մեծին իրիտանիոյ կառավարութեան այս վեհաժողովական ընթացքը և վեհաժողովականութիւնը մեծ ազդեցութիւն պատճառեցին ի Վաղղիա և բոլոր Ներքինիոյ մէջ։ Անգղիոյ հակառակորդ լրագրութիւնները չեն կրնար կամ չեն ուզեր հաւատալ անգղիական այս վեհաժողովականութեանը, որով ինքնակամ հաճութեամբ կը թողու Յունաստանի՝ զինուորական պատուական և զօրաւոր դիրք մի, որ պիտի են Յօնիական կղզիները։ Ուստի զանազան մեկնութիւններ կուտան այս բանին, սակայն ազատաւոր օրագիրները, ընդհանրապէս, դժգոհութեամբ

կը յիշատակեն լորտ Բէլլըրսթընին այս քաղաքական ընթացքը։ Փարիզի Օքիլիօն լրագիրը առաջինը եղաւ ի հրատարակելու ի բացատրել թէ իրաւի արժանաւոր, վեհաժողովական իմաստուն քաղաքականութեան դործ մըն է Մեծին իրիտանիոյ կառավարութեան այս որոշումը։ Յօնիական կղզիները Յունաստանին տալով, կը սէյիշեալ լրագիրը, լորտ Բէլլըրսթընը կը պատկէ իւր երկարամեայ քաղաքական ծառայութիւնը՝ կենցաղադիտական մեծ և վեհաժողովական դործով մի։ Անգղիոյ և Յունաստանի մէջ երախտագրութեան և սիրոյ տեղական կապեր կը հաստատուէ։ Բայց յայտնաւ, ինչ որ կուտայ՝ հաճութեամբ սրտի և ինքնայոժար կամօք կուտայ, իւր բարեբաղութիւնները չլաճանք Յունացի, և նուաստացուցիչ զինուորական ծախսու առնել չտար անոնց նոյն բարեբաղութիւնները։ Իւր առատաձեռնութիւնները իրեւ մեծ իշխան և բոլորովին ձրիապէս կը ընէ։ Ամեն կուտայ և բան մը չպահանջէր։

Յունաստանի թաղաւորական տնտեսոյն յաջորդըստ երեւանց, Տոմ Ֆիլիպիան թաղաւորը պիտի ըլլայ, որ Բարթոնիալ աշխարհ տիրող Տոմ Լուիլ թաղաւորին հայրն է, և մեծ տէրութիւնները իրենց հաճութիւնը արդէն տուած են այս տնտեսութեանը։ Սակայն տարակոյս չկայ, թէ Անգղիոյ կառավարութեան առաջին բանախօսութիւնը այս դործոյն վրայօք՝ յաջող վախճան մը չունեցաւ։ Ֆիլիպիան թաղաւորին առջև, որ տահաճութիւն կը յուսնէ թողու իւր առանձնական խաղաղ կեանքը՝ որուն մէջ քանի մը տարիէ հետէ կապրի։ Բայց Միլիթի Բիլ օրագիրը կը յուսայ թէ կարելի է յիշեալ թաղաւորին միտքը ընել և համոզել զնա որ ընդունի Յունաստանի թաղաւորական ախոյր ի պատճառս դժուարութեանց ժամանակին, որոնք ևս առաւել պիտի շփոթուին թէ Վերին վեհաժողովականութիւնը մերժելու ըլլայ մեծ տէրութեանց այս առաջարկութիւնը։

Մեծարդոյ միտքը ինչօք, որ Անգղիոյ կառավարութեան կողմանէ յատկապէս լինէր եկած է համոզելու համար զՎեհաժողովները որ իրենց թաղաւոր ընտրեն զՅիշեալ Տոմ Ֆիլիպիանը, միտքը ինչօք, եթէ յաջողութեամբ կատարուելու ըլլայ իւր պաշտօնը լինէր մէջ, անկէջ ուղղակի ի իրաւունք պիտի երթայ Ֆիլիպիան թաղաւորին քով, հա-

մոզելու համար նաեւ զՎերին վեհաժողովականութիւնը, որ չմերժէ Վեհաժողովական առաջարկութիւնը։

Իտալիոյ մէջ քաղաքական ներքին դժուարութիւնները օր ըստ օրէ կաւելնան ազատաւոր կուսակցութեան անհամբերութեամբը և ուրիշ զանազան անխոհեմ ընթացիւքը։ Վերին վեհաժողովականութիւնը թէպէտ և բարձրութիւն անդամոց մեծադոյն մասը իրեն կուսակցի և պաշտպան ունի, այսու ամենայնիւ մեծ ներդրութիւն կը կրէ անգղուս և անհամբեր երեսփոխանաց ուսանց յարձակումներէն։ Ասոնց մէջէն մօտիւ Մուզլիմի պատգամաւորին ատենախօսութեմէ և մասը յառաջ կը բերեմք, որուն անտեղութեանը վերայ ազգային երեսփոխանաց խորհրդանոցը մեծապէս ցաւեցաւ։ Ահաւասիկ այս ատենախօսութեան քաղուածը՝ զոր Լիթթօ լրագրէն կ'առնուի։

«Պարոնայք, Հոռոմի խնդիրը կարեւոր է կենսատու խնդիր մըն է, զոր չափէն աւելի երկնցուցին։ Հոռոմ պէտք է մեզ, պարոնայք, և աշխատելու եմք յիշեալ մայրաքաղաքը առնուլ, կամ մոռնիլ։ (Այլ խնդան)։ Ինչպէս ժամանակը չէ, և մեծապէս կը ցաւիմ խորհրդանոցին այս ընթացքին վերայ։ Եւ ըստ իր կը կարգաւոր Վաղղիոյ Միլիթի օրագրին մէջ թէ Հոռոմ տիեզերական խնդիր մըն է և չկրնար միայն ի նպաստ Իտալացոց լուծուիլ, կը հարցնեմ ձեզ, պարոնայք, թէ իւրաքանչիւր Իտալացի պէտք չէ՞ զգալ թէ ամօթը իւր ճակատին վերայ կը ընէ։ Անոց և ինքզինքնին խաբելը, անօրուտ են և ճարտարախօսութիւնները։ Այլ պէտք է հաստատուութեամբ գիտնալ թէ ինչպէ՞ վարչութեան քայլերուն հետեւելով՝ երբեք պիտի չկրնաք Հոռոմ երթալ։ Եւ այս բանը՝ երկու տարի կայ որ կը գուշակեմ ձեզ։ Եթէ ուրիշ կերպիւ վարուիլ անկարելի է, գոնէ դարեցուցէք ամեն հաղորդակցութիւնները Վաղղիոյ կառավարութեանը հետ։ (Այլ խնդան)։ Ուրիշ բան պէտք է ձեզ և ոչ թէ ներքին կարգադրութեան վրայօք խօսիլ։ Քանզի Իտալիան պիտի չկրնայ կարգադրուիլ որչափ ժամանակ որ Հոռոմ իւր ձեռքը պիտի չունենայ։ Որովհետեւ այն տեղէն է որ մեր թշնամիները կը սպառնան մեզ, և մեր իշխաններն են ձեռքը՝ առաջնորդելու, երբեք գաղափարները չեն լինիլ։ Պարոնայք, ինչպէ՞ կը խնդրէք։»

Ուրիշ ժամանակ այսպիսի ատենախօսութիւն մի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչպէ՞ կը խնդրէք։

Որչափ միայր ինձ ժամանակ ի պաշտօնական դործոյ՝ ոչ կամուրջ զայն յարգաւ հանգստեան անձին խոյ անցուցանել, զեղիւրդայ ի խոյ ազգային անցուցու հետ։ Թեանց ի մատենադարանին սրբոյ Ամենափրկչեան վանայ, ի մէջ ձեռագիր մատենիցն։ Պատգաւնոյն վաստակոյ խոյ կը յիշատակեալքն ի ստորեւ։

Ա. Գրիգոր եպիսկոպոսի(1) Մարաշեցոյ կամ Յեւաքանցոյ(2) ամենազեղեցիկ ձուռ՝ ի զրուստ սրբուհոյ կուսին Մարիամոյ, սկսեալ ի ծննդէն նորա ցվերապետ խոնին յերկինս, երկար բանիւք, վեհաժողովական մանաւանդ ի նկարագրութիւն ընդունելոյ զՍրբուհին երկնային իննեակ դասակարգութեանցն ի վերափոխմանն յերկինս, յԱթոռ Բարձրեցն։ Ընդ վեհաժողովեանն

(1) Ի պատմութեան Զամբեան Հայր Միքայիլի երկու Դրիգոր եպիսկոպոս մարաշեցի յիշատակին։ (Զամբ. Պատմ. Հայ. հատ. Գ. էջ 507, 514, 541)։ Այլ քե որոյն ի նոցանէ և ձառն այն, չիք ծանօթութիւն ինչ։

(2) «Մարաշ» անունը բաղադրի է. «Յեւաքանց» է անուն անապատին Մարաշայ, (Զամբ. պատմ. հայ. հատ. Գ. էջ 58)։ Վասնորոյ նոյն է ասելն Մարաշեցի կ'ըլ Յեւաքանցի։

ըստ համապատշաճ գողգաւորութեան՝ խառնին բանք վկայութեան յԱստուածաշունչ զորոյ, մանաւանդ յԱթոռ զորոյն Սրբուհին, ի գովեստ Տիրուհոյն։ Ունի սա և զբանի գովեստ աղօթից, այլ ոճն ոչ է վեհաժողովական անմիկ։

Բ. Գրիգորի վանեցոյ՝ մակ(5) անուամբ Ղարադոնիեան, բանք աղօթից և խոստովանութեան, բովանդակեալ յերկու գովեստ որք այսպէս սկզբնաւորին. Ա. «Անեղ լոյս և անձառելի ձառագայթ», Բ. «Տէր Աստուած ահաւոր և սքանչելագործ»։

Գ. Բանիկ կամ Բենիկ(4) վարդապետի բանք աղօթից, գովեստ ինն, որոյ զխաղաղութեանցն սկզբնաւորութիւնքն են ի ներքոյ յիշատակեալքն։

ա. «Տէր Աստուած ահաւոր և սքանչելագործ»։

բ. Ամենազոր անձառ և անքնին։

գ. Յիսուս Քրիստոս Աստուած մեր, ստեղծիչ ամենայն

(5) Ի Զամբեան պատմութեան Հայոց չիք յիշատակութիւն այսպիսի անուն։

(4) Ի Զամբեան պատմութեան Հայոց գովութեամբ յիշատակի անուն սորա. յորում գրի այսպէս «Մարքէ ասել քե ի սոյն դարս (յերթտասաներորդ դարուն) եր և բանիբուն վարդապետն Բանիկ կամ Բենիկ անացեալ՝ որ արար զպիսկէս ձառս, և գնդեղաք՝ ազօրս վայելուց բանիք և ընտիր շարադրութեամբ (Հատ. Գ. էջ 244)։

Ինչպէ՞ կը խնդրէք։

դ. Եւ արդ տէր Աստուած ամենակալ։

ե. Տէր Աստուած զօրութեանց՝ ահաւոր բարձրաւ։

զ. Եւ արդ տէր Յիսուս անմահ և անմահից թաղաւոր։

է. Տէր Աստուած անկեղծ հզօր և փառաւորաւ։

ը. Անձառ լոյս՝ լուսաւորեալ զլուսաւորաւ։

թ. Այլ արդ և այժմ՝ որ և ժամանակէ։

Դ. Անանիա վարդապետի՝ ի խորհուրդ Յօնանոս մարգարէի և յԱթոռ և ի Քրիստոս, և ի կամաւոր չարչարանս, և ի թաղումն նորա ասացեալ՝ բանք մեկ նարանական վարդապետութեամբք։ Վեհաժողովական խորհրդաւոր նմանաբերութիւնքն(5)։

Կան այլ ևս հետքեր ի գեղեցիկ մատենադրութեանց նախնեաց միւրոյ, զորս հետզհետէ ունիմ ընծայել ի տեղեկութիւն ազգի։

(5) Ըստ պատմութեան Զամբեան հայր Միքայիլի, չորեքին են նշանաւորք Անանիայ վարդապետ անունաւ. նախ՝ Անանիայ վարդապետ նարեկացի, երկրորդն՝ Շիրակացի. երրորդն՝ Սանահնեցի, եւ չորրորդն՝ քեռորդի Դեաղաւորին։ Այլ քե որոյն ի նոցանէ են մեկնաբանական վարդապետութիւնքն, չիք ծանօթութիւն ինչ։

Յարմարեալ թ. Կէր Յովնանց, Ատենադպիր սրբոյ Ամենափրկչեան վանաց։

պիտի խոսվէր ազգային խորհրդանոցը, սակայն այժմ ազգայնութիւն մի չըբաւ և խորհրդանոցը ազգատախտութեան մէկ անկարգութիւնը համարելով զայն՝ ամենեւին ուշադրութիւն չմատոյց անոր :

Խտարիոյ բարձրամէնթը իւր նիստերը վերստին դադրեցուց : Այս թերակղզւոյն լրացիրները կը հաստատեն թէ մինչև մէկ ամիս Վարդիի ամէն վանքերը պիտի գոցուին և վերանան :

Վարդի — Լոբքի լրագրութիւնները՝ առանց հիմնաւոր կերպիւ ճանաչելու Վարդիոյ առաջարկութեան խաղաղասիրական և մարդասիրական նպատակը, սաստկութեամբ կը խոսին նոյն առաջարկութեան վրայօր : սակայն Վարդիի Լոբքի օրագիրը յօդուած մի հրատարակեց, զոր փարիզի Ս. Լ. Լոբքի յառաջ կը բերէ, և որուն մէջ իրաց ճշմարտութիւնը հաստատուած է, և միանգամայն վճռական կերպիւ ապացուցուած է թէ Վարդիոյ առաջարկութիւնը բոլորովին անշահասէր և մարդասիրական զգացմունքով եղած է և առանց ամենափոքր միտք պատճառելու պատերազմով կողմանց իրաւանցը և դիւրագածութեանը :

Համագրային պատերազմը կը շարունակուի Ամերիկայի մէջ՝ առանց ակարութեան գլխաւոր երեւութի մէկ կամ միւս կողմէն : Հիւսիսային և հարաւային զօրաբանակաց մէջ արեւահայեղ կոխ մի պատահեցաւ մօտերս մի իրմիտի մէջ, բայց որոշիչ բան մի եղած չկայ և ըստ երեւմանց՝ այս ցաւալի պատերազմը տակաւին երկար ժամանակ պիտի դիմանայ :

Բէգերգրութիւն կը գրեն թէ բարձրագոյն կայսերազուն Միքայէլ Մեծ — Խուբսը՝ կայսեր տեղակալ անուանեցաւ Վոլիստեան նահանգաց մէջ :

Աւստրիոյ օգոստոսական խորհրդակցութիւնը կայսրը տեղութեան խորհրդանոցին փախուելուն բարեպատեհ առթիւ, պատուական դաշախտութիւն մի ըրաւ, որուն համապատասխանը հետեւեալն է .

«Վերախ սրտիւ կը տեսնեմ, որ տեղութեան խորհրդանոցին բացուելու ժամանակը իմ ունեցած և յայտնած անկախութիւններս ի դերեւ չեւան : Խաղաղութիւնը չվրդովեցաւ, և անոր հաստատուն մնալը կը յուսացուի : Աւստրիոյ հզօր տեղութեանցն յառաջ եկած վստահութիւնը աւելցաւ և մեր հայրենիքը՝ ի պատճառս յաջողութեանը զոր ունեցաւ իւր խաղաղասիրական յառաջագիւղ ընթացքին մէջ, կարող եղաւ ժողովրդոց համարումը ստանալ և բարեկամ ազգաց համարութիւնը զարթոցանել :

«Տեղութեան խորհրդանոցին աշխատութիւնը՝ զոր ի գործ դրաւ եռանդուն ջանք և խոհմութեամբ, մեծ և գոյալի աշխատութիւն էր : քանզի բազմաթիւ կարեւոր օրէնքներ քուտարկութեամբ և սահմանադրական ձեւերով հաստատուեցան և մանաւանդ տեղութեան եկամտից և ծախուց կարգադրութիւնը որոշուեցաւ զինի բազում քննութեանց և խնամատարութեանց :

«Ի մասին եկամտից անբաւականութեան և պակասութեանը՝ որ մեր դրամական կացութեանը մէջ կը տեսնուէր, որոշուեցաւ իւրեւ գլխաւոր և առաջին կանոն թէ Աւստրիան պէտք է որ ըստ մեծի մասին, իւր յատուկ նպատակը զոյգէ նոյն պակասը : Աւտի հարկ եղաւ ամեն առեւտրէրը աւելցնել : Հիւսիսային ցաւեցայ այս վախճանին վերայ, սակայն կը միտնար ուրիշ մեծադէս մտածելով թէ անկողնապահ և արդար բաժանումը հարկատուութեանց՝ պիտի թեթեւցնէ անոր ծանրութիւնը : զոր ստորակոյտ չունիմ թէ ազգասիրական ոգով պիտի տանին :

«Հասարակաց պարտուց քննութեան համար հաստատուել օրէնքը՝ կատարեալ ազգեցութիւն մի ապահովեցնելով ազգային երեսփոխանաց յիշեալ պարտուց հսկողութեանը վրայօր, և Գրամանոցին համար հաստատուել օրէնքը պայմանադրութեան մը հիմունքը որոշած ըլլալով կարգադրելու համար գլխաւորութիւնները ի մէջ Գրամանոցին և տեղութեան գանձուն, ուրախ սրտիւ կընաք ձեր տուները վերադառնալ, հաւատի ըլլալով թէ արդէն ի գործ դրիք առաջին սկզբունքները, որոց վերայ կը կայանայ Մահմադրութիւնը : Այս սկզբունքը հաստատուն պիտի պահմ, ինչպէս որ պահեցի մինչև ցայսօր : Իմ հաստատուն որոշումն է անկասկապ հեղ միշտ կայսերութեան միութիւնը և ի կատար

հաստատուն և սահմանադրական գործողութիւնը : Եւ ջանիկ պիտի ըլլամ տեսնելով զձեզ զաւ տարի դարձեալ ժողովեալ և դումարեալ ի խորհրդանոցս այս ի շարունակել ձեր աշխատութիւնները :

Այս գահախօսութիւնը ծափահարութիւններով ընդունուեցաւ ի կողմանէ անգամայն խորհրդանոցին, ուր ներկայ էին Հունգարիայի, Վոստաթաւանի, և Գրամանի վանիսայի տեսնադպրները :

Լոնտոնի Մ. Բիլլի — Բ. Բիլլ լրագրին մէջ լրակարգամբ «Միտնիք թէ Բորթուկալի Կիւրտիան թագաւորը իմաց առաւ թէ հաճութիւն չունի Զոնաստանի թագաւորական գահը ընդունել և իւր յարաբերական առանձին կեանքը թողուլ, որուն մէջ քանի մը տարիէ ի վեր կ'ապրէ : Դաւալին չէ հասկնալ որ իւր հայրենի ժողովրդեան սէրը և համարումը ստացած կատարեալ իշխան մի, որպիսի է Կիւրտիան թագաւորը, գոյնգոյն ցուցնէ և չփութայ իւր ընտանի կեանք սիրելի բարեկամները և ծանօթները փոխելու դանազան նեղութեանց և անձկութեանց հետ, զորս իւր նոր պարտաւորութիւնները պիտի պատճառեն իրեն :

«Այսու ամենայնիւ կը յուսամք թէ Կիւրտիան թագաւորը, ազգու փնջորդութեամբ և խնդրանք, կընայ մէկ կողմ թողուլ իւր գոյնգոյնութիւնը և իւր հակառակութիւնը այս առաջարկութեան համար, ի պատճառս այժման կացութեան մասնաւոր պարագայից : Վասնզի գոյնգոյն պիտի ըլլայ գանել ուրիշ երեւելի անձ մի այսպիսի կատարելութիւններով զարդարուած, որ կարող ըլլայ բոլոր Եւրոպայի վստահութիւնը շահելու և միանգամայն այսչափ անկախութիւններ տալ Զոնաստանի ի մասին սահմանադրական խոհմ յառաջագիւղութեանց և ապաւնի մեծութեան» :

Մ. Բիլլի — Բ. Բիլլ օրագիրը հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Զոնիական կղզեաց Զոնաստանի հետ միաւորութեանը վրայօր :

«Վերել թէ կատարելագոյն ճշմարիտ է որ Անգլիոյ կառավարութիւնը որոշած է Զոնիական կղզեաց պաշտպանութեան հրաժարել : Տեղեկացանք թէ լորտ Դոն Բասէլ (արտաքին գործոց պաշտօնեան) իմաց առած է Փարիզի, Վէնայի, Պերլինի և Բէգերգրութիւնի արժեւեղացը թէ Անգլիան պատրաստ է յիշեալ կղզեաց պաշտպանութիւնը թողուլ ի նը պատ Զոնաստանի, և թէ այս կարգադրութեան մասին Եւրոպայի հաճութիւնը ընդունելու նպատակաւ առաջարկեց Լոնտոնի մէջ ի ժողով և ի խորհրդակցութիւն դումարել այն տեղութիւնները՝ որոնք մէջնային դաշնադրութեան յատուկ յօդուածը ստորագրեցին՝ որ Զոնիական կղզեաց կը վերաբերէ : Այս տեղութիւնները Տ. Էն թողուլ, այսինքն Անգլիան, Վարդիան, Վոստիան, Աւստրիան, Ֆրանսիան, Սիւրիան և Սուէդիան :

«Ինչպէս կը տեսնուի, այս խնդիրը ստուգիլ եւրոպական խնդիր մըն է և շատ կը վախճանք որ, քննութեան ներքեւ մտնելէ ետեւ, կարելի չըլլայ կարգադրել զայն ըստ արժանաւորութեան և ըստ օգտից Մեծին Բրիտանիոյ» :

Անցեալները մասիւ տը Ժիրարտէն գիտնական անձը խաղաղական խնդրոյն լուծման վրայօր առաջարկութիւն մի հրատարակած էր, որ հաճելի չեւանալով Լ. Ս. Կոչուած կղերական լրագրին, սաստիկ կերպիւ մը պատասխան գրեց, և վիճարանութիւնը երկարեցաւ : Մօսիւ տը Ժիրարտէնը, որ Բիլլ լրագրին գլխաւոր խմբագիրն է, կամեցաւ իւր դադափարը բացատրել ի մասին Հոմի Երկեցեցոյն կատարեալ անկախութեանը : Այս անկախութիւնը՝ երկեցեցին՝ ձեռք բերած կը համարուի, կըսէր, իւր շրջանին մէջ դառնալով և առանց անկէջ դուրս ելլելու և կը յաւելցնէ թէ Հոմի տեղութիւնն ալ իւր կատարեալ անկախութիւնը պիտի ունենայ, նմանապէս իւր շրջանին մէջ դառնալով և առանց անկէջ դուրս ելլելու : Եւ որովհետեւ Լ. Ս. Կոչ լրագիրը կը պնդէր թէ տեղութեան շնորհուած այս անկախութիւնը ինքնիշխանութիւն պիտի ըլլար, մօսիւ տը Ժիրարտէն այսպէս կը պատասխանէ :

«Վաւարաբողնեալ ամեն բան ընելու իրաւունքը տալու է և կառավարեալներուն ամեն բան զրուցելու իրաւունքը : Ամեն բանը զրուցելու իրաւ

ունքը հակաբարձ ունենալով, ամեն բան ընելու իրաւունքէն երկեղ չկրնար ըլլալ : Կամանապէս առաջին ընելու իրաւունքը հակաբարձ ունենալով, ամեն բան զրուցելու իրաւունքէն չվախցուիր» :

Ի պատասխան այս տեսութեան, Լ. Ս. Կոչ լրագիրը հետեւեալ օրինաւոր գիտողութիւնը կը ընէ, «Ամեն բան կամ ուղածը զրուցելու և գրելու իրաւունքը անիշխանութեան խորխորատը պիտի ձգէ զմեզ և ամեն բան կամ ուղածը ընելու իրաւունքն ալ բարբարոսութեան պիտի վերադարձնէ զմեզ» :

Արշալոյս նախընթաց թուոյն մէջ զրուցեցինք, թէ Կոստանդնուպոլսոյ մէջ ըլլալու Արուեստահան գիտին վերաբերեալ յատուկ նամակ մի եկաւ Բարձրագոյն Գոնէն յանուն մեր վսեմափայլ կառավարչին : Ահա այս պաշտօնական նամակն թարգմանութիւնը :

Օգոստոսի Սուլթանին բարեհաջող գոհակալութեան ի վեր մեծամեծ ջանք և խնամատարութիւններ կողմնորոշող Թուրքաստանը՝ քաղաքակրթութեամբ և բարօրութեամբ բարգաւաճող երկիրներուն կարող անցնելու Խրաբանչիւրօր գլխից այն ամեն միջոցները՝ որոնք ի գործ դրուեցան այս նպատակը ձեռք բերելու համար :

Կառավարութիւնը իւր գործունեաց խնամատարութեանը նոր ապացոյց մը տուաւ մօտերս՝ հրաման տալով որ Լ. Պօլոյ մէջ՝ 1279 Բամալան մասին սկիզբը Արուեստահանդէս մի ըլլայ, ուր ի ցոյց պիտի դրուին Թուրքաստանի երկրագործութեան արտադրութիւնները, նմանապէս ամեն կերպ ձեռակիրտածները :

Այս կարեւոր որոշման գործադրութեանը համար, կառավարութիւնը յատուկ մասնագործ մի սահմանեց նախագահութեամբ հասարակաց կրթութեան պաշտօնից բարձրագոյն Սուլթանի Պաշայի փաշային : Այս մասնագործոյն յանձնուած է որ հարկաւոր եղած տեղեկութիւնները տայ և ամեն գիտութիւնները մատուցանէ ի մասին յուզարկման և փոխադրութեան ամեն կերպ երկրագործական և արուեստական արտադրութեանց : Մեծ — Կարգադրութիւնը կողմնէ հրահանգներ տրուեցան դաւաճաց կառավարչներուն և շրջաբերական տղակալ նամակներ յուզարկուեցան կայսերութեան ամեն կողմերը՝ ծանուցանելու համար ստաւաճաւոր և գիւրդին միջոցները ի մասին յուզարկման գոհակալ արտադրութեանց :

Ի տեղեկութիւն Կոստանդնուպոլսոյ հասարակութեան յատուկ ծանուցում մի պիտի հրատարակուի վերջիշեալ մասնագործոյն հրամանոցը համեմատ :

Գլխաւոր և բանկրուն անձինքնիւ կազմաւ ժողով մի հաստատուեցաւ, Արուեստահանդէսին պաշտօնին շինութեանը վերայ հող տանելու համար : Այս պարտաւոր պիտի շինուի հանդուցեալ Սուլթան — Մահմադ խանին շինութեան մօտ եղած մի պիտի Սուլթանին պարտիցին կից գեանքն վերայ : Քանի մը օրէ ետեւ, այս շինութեան համար Կոստանդնուպոլսոյ քաղաքի պիտի գործէ, և շինքը ընդարձակ ու շքեղ պիտի ըլլայ ըստ կարգի իրում :

Թեպետեւ այս Արուեստահանդէսը Թուրքաստանի համար յատկացեալ պիտի ըլլայ, այսու ամենայնիւ օգոստոսի Սուլթանը մասնաւոր շնորհիւ մը կամեցաւ որ անոր մէջ ընդունուի նաեւ Եւրոպայի երած այն բաները, որոնք նորահաս գործիքներով և շոգեշարժ մեքանիզմներով կը շինուին, և որոց զինքը հասարակ գործառնայ մէջ շինուածներուն կէս գինն զգաւալ է :

Այս Արուեստահանդէսին միջոցաւ Թուրքաստանի բնակիչները իրենց աչքով պիտի կրնան տեսնելու շատ բաներ, որոնք պիտի օգնեն իրենց գործունեութիւնը զարթոյցանելու և իրենց սովորական արհեստը կատարելագործելու :

Եթէ կըզանուին այնպիսի անձինք, որոնք կուզեն Եւրոպայի բերել տալ նորահաս մեքանիզմներ, թէ՛ լուրտ տալարութեան և թէ՛ ուրիշ բաներ շինելու համար, այս մեքանիզմները պիտի ընդունուին, և անոնց համար տեղի պիտի շնորհուի Արուեստահանդէսին մէջ :

Օտար երկիրներէն եկած ամեն տեսակ բաները մարդի տուրքին ազատ պիտի ըլլան :

Օտար տեղութիւնաց հարստանները և օտար տեղութիւններէ պաշտպանները որոնք Թուրքաստանի մէջ գործարարներ ունին, կատարեալ արտոնութիւն պիտի ունենան իրենց արտադրութիւնները Արուեստահանդէսին մէջ գնելու : Բաւական է որ օրինաւոր կերպիւ հաստատուի թէ Թուրքաստանի մէջ շինուած են յայնժամ շնորհակալութեամբ պիտի ընդունուին նոյն արտադրութիւնները :

Բանկրուն ու երեւելի անձանցմէ բաղկացեալ ժողով մի ևս պիտի հաստատուի Արուեստահանդէսը գործած

բաներուն արժանաւորութեանը վրայօք դատողութիւն
և որոշում մի ընելու համար : Այս ժողովոյն անդամներ
ըն խոհեմ և լուսաւորեալ անձինք պիտի ըլլան և անոնց
անունները մտերս պիտի հրատարակուին :

Վերջիշեալ մասնաժողովը , որ մինչև ցայսօր բարձ-
րագատիւ նախադասին սրաւորը կը դռնարկէր , յետ
այսորիկ իւր նիստերը պիտի ընէ վաճառականութեան
սրաւորները ամեն երկուշաբթի օրերը ի սրահն որ
յատկացեալ է հասարակաց կրթութեան վերատեսչին :
Ուստի Արուեստահանդէսը դնելու բաներ ունեցողները
կրնան ներկայանալ ի յիշեալ սրահն և ըսելիքն ծա-
նուցանել :

Այս մասնաժողովոյն անդամներն են ,
Դեպքանայ ներկայացուցիչ՝ Բեամիլ—Պէյը ,
Բարձրագոյն ժողովոյն անդամ՝ Նազիմ—Պէյը ,
Վաճառականութեան սրաւորներուն խորհրդակա-
ն Սերվիշ Լիֆէնտին և Աղաթօն Լիֆէնտին :

Յօդուած 1. Իւրաքանչիւր զաւառն Արուեստա-
հանդէսը յաւարտելու բաները պէտք է որ պատուաւոր
ու բաներուն անձին մէ յանձնուին . որ պիտի ընտրուի և
պիտի յաւարտուի ի Վարտանդանապօլիս , իրիւ պատգա-
մաւոր ի կողմանէ ընտելաց նոյն զաւառնին : Յօդու-
ած 2. Բաներուն փոխադրութեան ծախքը , նմանապէս
Վ. Պօլիս գալու պատգամաւորին անդամն և ընտելու-
թեան ծախքը կառավարութիւնը պիտի հազայ :

Արուեստահանդէսը գրուելու բաները ազատ են մար-
տի իրաւունքին և ուրիշ ո՛ր և է տարբէ : Այս բաներուն
փոխադրութեան ծախքը պիտի վճարուին կառավարու-
թեան եկամտոյն անտուլին այն քաղաքին մէջ , ուսկից
կը յաւարտուին :

Յօդ. 2. Արուեստահանդէսին ժամանակը վաճառ-
ուած բաներուն արժէքը պիտի աւանդուին ի ձեռս փո-
խադարձ պատգամաւորաց զաւառն , որն , որոնք յետոյ
պիտի յանձնեն նոյն բաներուն օրինաւոր տիրանցը :

Յօդ. 5. Արուեստահանդէսը գրուած բաները՝ որոնք
չեն կրնար վաճառուիլ նոյն հանդիսին ժամանակը , կա-
ռավարութեան կողմանէ դնող պիտի աւանդուին , ըստ ի-
րաւացի զնահատութեան տիրանց խրոյ :

Յօդ. 4. Այն արտադրութիւնը որ Արուեստահան-
դէսը յաւարտուելու բաներուն կարգը գրուած է , և ու-
րուն վարդիկ քանակութիւնը և անհշտն կարեւորութիւնը
չարժէ որ փոխադրութեան յատուկ ծախք ըլլայ անոր
համար , նոյն արտադրութիւնը այնտեղ իսկ դնող պիտի
աւանդուի կառավարութեան կողմանէ և պիտի յաւար-
տուի ի Արուեստահանդէսը :

Յօդ. 5. Բրեկեյ արտադրութեան մը տերերը՝ ու-
րոնք ընկերներ կամ գործակալներ ունին ի Վ. Պօլիս ,
ազատ են իրենց վաճառքները ուղղակի յաւարտելու նոյն
ընկերացը կամ գործակալացը :

Յօդ. 6. Անոնք որ կը ցանկան ներկայ դնուիլ Ար-
ուեստահանդէսին մէջ իրենց արտադրութիւններու ,
այնպիսիները իրենց ձանապարհաբոլորութեանը հարկաւոր
եղած ամեն կերպ դիւրութիւնները պիտի ընդունին վե-
հափառ Ստիվանին կառավարութեանէն :

Յօդ. 7. Իւրաքանչիւր արձեւատար՝ որ իւր արձեւա-
տին կատարելագործութեամբը գերազայն պիտի համար-
ուի իւր հետամուտ արուեստաւորաց մէջ , նմանապէս
Իւրաքանչիւր հեղինակ գիւտի մը՝ որ ընդհանուր կերպիւ
պիտի հաւատուի , այնպիսին կառավարութեան կողմանէ
վարձատրութիւն մի պիտի ընդունի , որ երեկը պիտի
հանդիսացնէ զինքը ի մէջ իւր արձեւատակացը : Այս
վարձատրութիւնը պիտի չնորձուի ըստ որոշման ժողո-
ւոյ մը , որ այս բանին համար յատկապէս պիտի կազմուի :

Այս Արուեստահանդէսը հարցաքննութեան և հետա-
մուտեան տեսակ մի ասպարէզ ըլլալով , մեծապէս օգ-
տակար պիտի ըլլայ ի գործաշնորհ թուրքաստանի
մէջ մտցուած արձեւատից ետանդը և միանգամայն քա-
ջալերութեան բարեպաշտէ՛ առթի մի պիտի ըլլայ , աշ-
խատութեան և ճարտարութեան ոգին զօրացնելու և յա-
ռաւջանելու համար ի մէջ ժողովրդոց :

ՅՈՒՆԵՍԿՆ

Ըզգային խորհրդանոցը թէպէտե Դիւիտեմբերի
10ին բացուեցաւ Ըթէնքի մէջ , սակայն տակաւին
չկրցաւ օրինաւորապէս կազմուիլ և ազգային գործոց
վրայօք հարկաւոր որոշումները ընել ի պատճառս
բացակայութեան մեծադոյն մասին պատգամաւորաց :

Մեծին Բրիտանիոյ արտաքին կարգի գեսպան մե-
ծաշնորհ միտար Հէնրի—Շօր՝ Լիւթօմ Դիւիտեմբերի
11ին հասաւ անդղական պատերազմական շոգեհա-
ւով մի , և նոյն օրը երեկոյն երկար տեսութիւն մի

ըրաւ հեղինակին կառավարութեան նախագահին
հետ . որուն նախ իմաց տուաւ թէ Միգիլիան որոշած
է Յունական կղզիները Յունաստանի թողուլ և երկ-
րորդ՝ իւր կառավարութեանը կողմանէ առաջարկեց
որ Բորթուկալի Տոմֆէրտինանը Յունաստանի թա-
ղաւոր ընտրեն , ծանուցանելով թէ Գաղղիան ևս
իւր հաճութիւնը տուած է այս ընտրութեանը : Սա-
կայն ըստորում Հեղինակները հաստատուն կրման
իրենց առջի ընտրած թաղաւորը ուզելու , այսինքն
Վիքթորիա թագուհւոյն որդին Ալֆրէտ Ինչիանը ,
Մեծին Բրիտանիոյ արտաքին կարգի գեսպանը շատ
նեղութիւն կը բաշէ հասկնելու անոնց թէ մեծ տե-
րութեանց՝ ըստ այսմ մասին , ըրած որոշումը ան-
գաւանդի է : Հեղինակները կը պատասխանեն թէ
իրենց ազգային որոշումն ևս անգաւանդի է :

Քաղաքական իրաց այս վեճակին մէջ , բնականա-
պէս խոռվութիւնները և անկարգութիւնները պակաս
չեն կրնար ըլլալ : Կազակութիւնը կը դժուարաց
և կը տարածուի բոլոր Յունաստանի մէջ և ծովասպա-
տակութիւնը սկսաւ զընկը վերցնել : Այս դժուարե-
ղեղութեանց առաջըր ուրիշ շերտիւ շարունակ
միայն կանոնաւոր և զօրաւոր կառավարութեամբ մի .
զոր՝ ըստ երեւմանց , Յունաստանը շուտով պիտի
չկրնայ ձեռք բերել :

Փարիզէն կը գրեն :
«Կառավարութիւնը հարկ համարեցաւ մէյմէկ յա-
տուկ դատաւոր յաւարտելու Վ. Պօլսոյ և Լիֆէնտան-
դիոյ հիւպատոսական ատեանները և որոց համար
15 և 25 000 ֆրանք տարեկան վարձք պիտի վճարուի :
«Բանդի դատերուն թիւը յիշեալ երկու քաղա-
քաց մէջ ամեն տարի աւելնալով վերայ է . և շատ
անգամ այնպիսի դատաստանական դէպքեր կը սրա-
տահին , որոց վրայօք հաստատուն վճիռ մը չեն
կրնար տալ հիւպատոսները՝ ընտանեցած չըլլալով
դատաստանական սովորութեանց հետ : Եւ որովհետեւ
հիւպատոսաց վճիռները՝ եթէ բողոքուելու ըլլան ,
Լիֆէնտանքի դատաստանական ատեանին մէջ կը
վերաքննուին , շատ անգամ հարկ կը ըլլար նոր և բա-
րեկարգ վճիռներ տալ : Այս անտեղութիւնը յետ
այսորիկ պիտի ջնջուի , երբոր սեպական օրէնս-
դէտներ այս գործոց վրայօք պիտի զբաղին » :

Փարիզի Բաշի լրագիրը հետեւեալ տեղեկութիւն
կուտայ Յունական ժողովրդեան թուոյն վրայօք :
«Յունական կղզեաց ժողովուրդը գրեթէ 500 հազար
հոգի է . որոցմէ 85 հազարը Քորֆու կը բնակի , 91 հա-
զարը՝ Քիֆորիոս , 900 հոգի Չիլիքո , 8500 հոգի Ի-
թաք կղզին , 800 ի Բարոս 25000 հոգի սուրբ Մա-
րիանոս կղզին և 64000 հոգի ի Չանդա » :

Ի ստանի լրագրութեան մը մէջ յետագայ յօդ-
ուածը կը կարգաւորէ :
ՄԵԾ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԻ
Միսիքարաքիւն վասն վշտացեոց :

Փոքրիկ միսիքարութիւն չէ մեղ համար երբոր
հաստատուն կերպիւ գիտեմք թէ , իսբեբայի մը յա-
ջողութիւնը ժամանակ մը սրբան և մեծ ըլլայ ,
գարձեալ չկրնար երկար ժամանակ շարունակ խա-
բել մարդկային ազգը : Եւ յիշուի , որչափ մար-
դիկ կը ջնարան ձեռք բերել անցաւոր և հարեանցի
համարում մի և շուտով կը կորսնցունեն զայն և մո-
ռացման մէջ կիսնան : Այս բանը մասնաւորապէս
բժշկական արհեստին հետեւողաց կը պատահի , որոնք
շատ հիւանդութիւններ եղած ժամանակը կաշխատին
հասարակութեան վստահութիւնը ստանալու , որպէս
զէ յետոյ իրենց անպիտան գեղերը տան անոնց :
Անկեղծաբար կը խոստովանիմք թէ , քանի մը տարի
կայ , երբոր առաջին անգամը լսեցինք որ Հոլ-
լոնդ բժշկին տիեզերական համբաւոյն վրայօք կը
խօսէին , վստահութիւն չունեցանք այն զովաստա-
կան աղաղակներուն վերայ և կարծելով թէ մեր դա-
տողութիւնը ուրիշներէն շատ աւելի շիտակ է , եր-
բէք միտաբանէս չէր անցնէր թէ մէկը կարող պիտի
ըլլար մեր դատողութիւնը փոխել տալու : Բայց այս
օրուան օրս ի խորոյ սրտի ներողութիւն կը լսեցինք
մեր սխալ և անիրաւ դատողութեանը համար : Վասն
զի հիմաւոր կերպիւ քննելով Հոլլոնդէյնի բժշկա-
կան գրութիւնը (սիսթէմ) , կատարելապէս համոզ-
ուեցանք թէ սխալած եմք և թէ բոլոր աշխարհ ար-

դարութիւն կընէ անոր՝ դասելով դնա անմիջապէս ,
(քանզի տարակոյս չկայ թէ այս բանը պիտի ըլլայ
քիչ մը ետքը) մարդկութեան մեծ բարեբաղաց առա-
ջին կարգը : Հոլլոնդէյ բժիշկը բացատրեց մարդ-
կային հիւանդութեանց ամեն դաղանքը և կարող
եղաւ ապացուցանելու թէ բժշկական ամեն դարման
ները , սկսեալ համբաւաւոր Հէնթէր բժշկէն , սխալ
սկզբանց վերայ հիմնեալ էին : Պատուաստը դանօղ
երեւելի ճէննէր բժիշկը՝ ծաղիկ հիւանդութեան ա-
ռաջըր առնելու կերպին մէջ աւելի մեծ յեղափոխու-
թիւն մը չըրաւ քան զյեղափոխութիւնն Հոլլոնդէյնի
ի բժշկական վարդապետ հասարակ սովորութեան մէջ :

Ըրեւնը պարզ հեղանիւթ մը չէ , և մարդոյս
չնչեղանիւթուն և երակներուն մէջ իւր շրջանը ը-
նելով՝ միւս հեղանիւթոց տեսակին հետ միայն հա-
ղորդակցութիւն ունենալ չէ նպատակը : Այնիկա
կենդանի է , ինչպէս դիւրին է համոզուիլ արեան
տեսութեանէն : Մէկ խօսքով արեւնը՝ մարդոյս
կենսոյն է : Ամեն բնաբանական ակտները , որպիսի
են անմարսողութիւնը , երկամանց , լերդի (զարա-
ճիէր) , սրտի , թոքի (աղ ճիէր) և ստամոքի անկար-
գութիւնները , մարմնոյն անմաքուր ամեն հիւթոց
դոյացողութիւնը և փոխադրական ու երկրի մը սեփա-
կան հիւանդութեանց մեծ մասը արեան անմաքու-
թեան կը ծագին , կամ վերջապէս անոնց գրգռիչ
պատճառը արեան ասպիւնեալ վիճակին մէջ փնտ-
ռելու է : Ուստի եթէ արեւնը մաքրես և միշտ նոյն
մաքուր վիճակին մէջ պահելու ըլլաւ , ո՛ր և է հի-
ւանդութիւն մի չկնար աւելլ և ոչ փնտաւ մարդոյս
առողջութիւնը : Այս կարեւոր գիւտը Հոլլոնդէյնի
անուան պայծառութիւն մի տուաւ , որ քաջամարտիկ
գիւցաղին մը կամ քաղաքագետ մեծ պաշտօնէի մը
համբաւէն շատ գերազայն է : Վասնորոյ չեմք զար-
մանար տեսնելով Հոլլոնդէյն բժիշկին մեծ համարումը
և յարգը զոր ստացած է Եւրոպայի և Ասիայի մէջ ,
նմանապէս Աֆրիկէի , Ամերիկայի և Ովկիանիայի մէջ :

ԱՅԳԱՅԻՆ

Պոստանդնուպօլսոյ Բաշի լրագիրն
Դիւիտեմբերի 15—27 թուոյն մէջ կը կարգաւորէ :

«Երկէ չէ առջի օրը Հայոց խառն ժողովը բողոք մի
շարագրեց ընդդէմ դատապարտութեան որ վճեցան
Մարաշի մէջ : Այս ժողովը կը բնակուի որ Զէյթունի գո-
ծոց վրայօք նոր հարցաքննութիւն մի ըլլայ ի Վ. Պօլիս » :

—Դարձեալ նոյն լրագիրը՝ իւր թուոյն մէջ որ ի
19—31 Դիւիտեմբերի , հետեւեալ կը հրատարակէ .

«Մեր վերջին թուոյն մէջ դրուեցանք թէ Հայոց
խառն ժողովը բողոք մի շարագրած էր ընդդէմ դատա-
պարտութեան որ վճեցան Մարաշի մէջ : Եւ արդիւրեւ
ամենապատիւ տէր Ստեփան տեղակալ Պատրիարքը ,
ընկերութեամբ գերապատիւ Երեմիա եպիսկոպոսին ,
քահանայի մը և երկու Զէյթունի երեկեայ , Բարձրա-
գոյն Գուրը դնաց և վստահալայ Ապի վաշտիկն ձեռք
յանձնեց զյիշեալ բողոքագիրը » :

ԺԱՄԱՆԵԿ
ՀԱՆԴԵՍ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ

Այս անունով շարաթական բանասիրական հանդէս
մի սկսաւ հրատարակուիլ ի Կոստանդնուպօլսոյ խառ-
գրութեամբ յարդոյ պարոն Ստեփան Պ. Պօղոս (Պա-
փաղանց վարժապետին . որ կը խոստանայ ո՛չ միայն ազ-
գային ժամանակից դէպքերու հաւաքածոյ մը ընել իւր
թերթը , այլ և հին և նոր ազգաց պատմութիւնները ,
երեկը իրաւունքները , ահաւոր դիւցաղանց գործերն
ու կենսադրութիւնները , նմանապէս զաշխարհ սարս-
յնող հետաքննելու գրուածները մերթ ընդ մերթ հրա-
տարակիլ ծանուցանելու համար մերայնոց թէ ինչպիսի
և ինչ կը անակաւ կը ցար ևս անոնք իրենց հայրենաց
ծառայելը գիտնալ և ի գործ դնել :

Այսպիսի բանասիրական ազգօգուտ հանդէս մի , կիթ-
խահմութիւնը իրեն առաջնորդ ունենայ միշտ , ինչպիսի
կը յուսամք թէ պիտի ունենայ , տարակոյս չկայ թէ և
աւանդուի սիրով և յօժարամտութեամբ պիտի ընդունուի
հայազգի հասարակութիւնին , և հետեւաբար օր ըստ օր
յաջողութեամբ և արդեամբ պիտի յառաջդրուի :

Յիշեալ հայրենասնուէր հանդիսին տարեկան բաժա-
նորդագրութեան արժէքը հինգ արծաթ Մէճիսիէ է ,
կանխիկ վճարելի : Վեցամսեայ դիւր երեք արծաթ Մէ-
ճիսիէ և մէկ թերթին գինը չորս զուտու է :

Այսինքն վերոյիշեալ նոր հանդիսին հրատարակու-
թիւնը ուրախութեան առիթ մի պիտի ըլլայ մեր յար-
գոյ ընթերցողացը, կը պարտաւորինք ցաւալի սրտիւ ծա-
նուցանել անոնց՝ զգաղարուժը չորս գրական հանդիսից՝
որոնք ժամանակէ մը 'ի վեր կը հրատարակուէին 'ի Այս-
տանդնուպոլիս : Այս պարբերական թերթերն են Այս-
հանդէս ութօրեայ , Զեպիրը Հայերենաց' հանդէս հնդե-
տասանօրեայ , Վարդի հանդէս ամսօրեայ և Թուշնիկ՝
օրադիր ամսօրեայ . որոնք զգաղարուժը ապրուստ չի-
գտնելով, այսինքն բաւական ընթերցողներ չունենալով՝
հարկադրեցան վերջացնել իրենց ընթացքը : Այս եղե-
լութիւնը ազգային յառաջադիմութեան ձախողը ապա-
ցոյցներէն մէկն է . քանզի , ինչպէս որ աղբի մը մէջ
լրագրաց հրատարակութիւնը և յաջորդութիւնը՝ նոյն
աղբին ընթերցասիրութեան և յառաջադիմութեան նը-
շան մը կը համարուի , նոյնպէս անոնց դադարումը՝ կէտէ-
հեմք սխալի , ընթերցասիրութեան ոգւոյն տկարանա-
լոյն յայտնի ապացոյց մըն է : Սակայն ըստ մեր կարծ-
եաց , այս բանին պատճառը մեծ մասամբ դարձեալ
լրագրարականները եղան . որոնք զժողովարար զըռեցոյ-
ցին բարեկէր հատարակութիւնը՝ իրենց թերթերը վա-
տահամբաւութեան , կրկն և ազգային երկրպագութեան
գործիք մը ընելով :

Մոսկուայի Հաճախորդներ Ռոսիոյ լրագրին Ղեկ-
տեմքերի 1 թուոյն մէջ հետեւեալ լուրը կը կարդամք .

«Սուրբ Էջմիածինէն գրում են մեզ՝ թէ Հոկտեմբերի
2ին եկած է այնտեղ թրուսից թաղաւորի հօրեղայր՝
Փրէնս Ապէրտը , որ յետ տեսանելոյ եկեղեցին , դրա-
տունն , և այլ երեւելի հնութիւններ , ճաշ վայելած է վե-
հարանի մէջ , և իւր խորին շնորհակալութիւնը մատու-
ցած է աթոռոյ միաբանութեանը : Նորին Բարձրութեան
վերջին խօսքերն եղած են . «Պունիմ երբեք մոռանալ
զսուրբ Էջմիածին և զմիաբանութիւն նորա , որ այսքան
յարգեաց զիս» :

Գերապատել Դահնգաբան Տ . Կարապետ վար-
դապետը հետեւեալ ուրախալի լուրը կուտայ Փաշիշ
լրագրին միջոցաւ .

«Մանչեստրի Հայոց եկեղեցին , Աստուծոյ շնորհին՝
Յունվարի վերջին 1863 թուին պիտի բացուի :

Պ . Պ . Պապօ , Մուշեան , Յովհաննէս Յակոբեան ,
Եսայի Անուսեան և Ահարոն Վարպետեան , սոյն եկե-
ղեցոյ հոգաբարձուքն , բարեպաշտական ջանքը առ-
այժմ 4 հարիւր լիւրայի չափ , հոն գտնուած պատուելի
ազգայիններէն ժողովեցին և բանքան զրին : Հոգեւոր
և առատաբերտ նուիրատուաց ցանկն ալ շուտով պիտի
հրատարակուի ի գլխութիւն ամենեկուն :

ԿՈՍՏԱՆՍՆՈՒՊՈԼԻՍ . 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

Պաշտօնէից խորհրդոյն անգամայ մէջ զլիաւոր
փոփոխութիւններ եղան ըստ բորձու հրամանի օ-
գոստափառ Սուլթանին , որուն ինքնազիր հրովար-
տակին թարգմանութիւնը հետեւեալն է . որ ամսոյս
21ին կարգացուեցաւ 'ի Բարձրագոյն 'ի ուղի :

Իմ բարձրապատիւ Վեզիրս ,

Մէհմեդ Բիւլտի փաշան իւր պաշտօնէն հան-
ուելով , հարի-Դուրա խորհրդոյն նախագահ հաճի
Բաշիտ փաշային յանձնուեցաւ Սէրասքերի գլխաւոր
պաշտօնը՝ միւշերութեան ատիւժանաւ :

Թափխանէի խորհրդոյն նախագահ Հալիլ փաշան՝
Թափխանէի միւշեր անուանեցաւ :

Նուպիյի զօրութեանց անաչութիւնը ծովակալու-
թեան խորհրդոյն նախագահ Մուստաֆա փաշային
յանձնուեցաւ առժամանակեայ կերպիւ :

Այս երեք երեւելի պաշտօնատարները Բարձրա-
գոյն Գուռը յուզարկեցան և կը հրամայեմք որ նոյն-
պէս ճանչցուին :

Մանակարողն Մուստաֆա շնորհեցէ՝ նոցա հաւա-
տարմութիւն և ամբօնութիւն իրենց պաշտօնից մէջ :

Ներկուշաբթի օրը , տէրութեան բարձրագոյն ժո-
ղովոյն նախագահ Բեաւիլ փաշան Մեծ-Լապարդոս
անուանեցաւ , ըստ տնօրէնութեան յետապալ կայ-
սերական ինքնագիր հրովարտակին , որ Բարձրագոյն
Գուռը կարգացուեցաւ :

«Պուստ փաշան իւր հրաժարականը տալով , դուն
Բեաւիլ փաշա , որ բարձրագոյն ժողովոյն նախա-
գահ ես և իմ պաշտօնէից մէջ երեւելի հանդիսա-
ցած ես քու արժանաւորութեամբդ , Մեծ-Լապար-
դոս կանուանեմ գեղջ . Ուստի հիմա սար իմ կտաւ :

Վարութեանս գործերը առաջնորդելու ըստ օրինաց
հաւատարմութեան և ուղղութեան» :

—Ինչ ժամանակէ 'ի վեր ուսումնասիրական ըն-
կերութիւն մի հաստատուեցաւ մայրաքաղաքի մահ-
մետական երիտասարդաց մէջ , Օսմանեան Գրադիսական
ընկերութիւն անուամբ , որուն նպատակն է բարդա-
կան և ուսումնական օգտակար տեղեկութիւնները և
ուրիշ գիտութիւնները , կարելի եղածին չափ , տա-
րածել իրենց համազգեսցը մէջ :

Յիշեալ ընկերութիւնը կազմուելէ ետեւ , անմի-
ջապէս սկսաւ ամիսը անգամ մի բանասիրական տետ-
րակ մի հրատարակել Մեծաւայի Գրադիսական
որ բազում սիրով և եռանդեամբ ընդունուեցաւ օս-
մանեան հասարակութեան , և պաշտօնական երեւելի
անձինք փութացան բաժանորդ գրուել նոյն տետրա-
կին 'ի քաջալերութիւն և 'ի նպատակ նորահաստատ
հայերենասիրական ընկերութեանը :

Արտաքին գործոց պաշտօնեայ բարձրապատիւ Աա-
լի փաշան ևս քաջալերական յատուկ նամակաւ մի
հաճեցաւ պատուել զյիշեալ Օսմանեան Գրադիսական
ընկերութիւնը :

ԶԱՆՈՒՅԻՄ ԵՄ ԵՄ ԵՄ ԵՄ

Զմիւռնիա , 29 Դեկտեմբերի :

Մի գերադասու տէր Պօլս սրբազան Առաջնորդը՝
ընկերութեամբ ազգային լեզուադէտ երեւելոց ոմանց և
քանի մի քահանայից , փոխադարձ այցելութիւն ընկե-
ղանց քաղաքիս Ռոստոյ հիւպատոս մօտիւ Մութրաս
երեւելի պաշտօնէին և Լատինացոց արքեպիսկոպոս գե-
րապետիւ Սրաքարիէթրա մօնսկինի օրին , որոնք բա-
զում յարգանքով և արժանաւոր միտաբանօք ընդունեցան
Խզմիրի Հայ ժողովրդոց հոգևոր հովիւ և պատկառելի
երեսփոխանը :

—Եթէ տարեկան Հայ պատանի մը , որ ժամանակէ
մը 'ի վեր անբուժելի հիւանդութեամբ մի ախտացեալէր ,
անցեալ օր քանի մը ժամ անդունչ մտած մտալով , կար-
ծուել է թէ մեռաւ : Ուստի դերեզմանը կը փորձուի կը-
պատրաստուի և քահանայք ննջեցեղոյն տունը կերթան
որ թաղման հանդէսը կատարեն և եկեղեցի բերեն : Այս
միջոցին մեռած կարծուած պատանին՝ որ մարած է և
զեր , կարծնայ . ուստի թաղումը հետեւեալ օրուան կը
մնայ : Վանդի հետեւեալ օրը յիշեալ զժողովրդ պատանին
ստուգել կը մտնեն :

Այս ցաւալի եղելութիւնը , որ Խզմիրի մէջ այս շաբ-
թու պատահեցաւ , կրնայ զգուշութեան և խոհմտութեան
դաս մը ըլլալ մերազնեայ ժողովրդոց . որպէսզի չփու-
թան մեռելները անմիջապէս թաղուել : Եւրոպայի ,
ինչպէս յայտնի է , սովորութիւն ունին 24 ժամ անթաղ
պահելու մեռած անձի մը դիակը : Այս սովորութիւնը՝
առանց փորձոյ և առանց հիմնաւոր պատճառի չէ ըն-
դունուած անշուշտ : Վասնորոյ Հայոց ազգն ևս պէտք է
որ դո՛ւն մասամբ իւր սոյն օրինակին հետեւելով քիչ մը
ուշացնէ իւր մեռելոց թաղումը :

—Հրեայ լուսաւորու (սառաֆ) մի Յունաց Գնդեան
երկրորդ օրը իւր խանութին առջև ոսկի դրամ կը համբեր
ուրիշ հրեայի մը տալու համար . և զրամը քանի մը մէջ
դնելով այնինչ կը յանձնէր անոր , անզգամ յոյն երկտա-
սարդ մի որ քիչ մը հետեւէ կը լիւթէր , քանի ոսկիով
ընցուն՝ որուն մէջ 4—5 հազար զուտուշի չափ ստակ կար
կըսեն , յալիւտակելով կը փախչի : Այս յանդուգն գործը
զժողովարար չկրցաւ բռնուիլ :

—Պէրութին կը գրեն թէ նոյն քաղաքին ընդհանուր
կառավարիչ մահմադար Սահմա փաշան (Խզմիրի վաղ-
մի կառավարիչը) Նոյեմբերի 26ին զիշերը փառաւոր
պարահանդէս մի ըրաւ հանդիւր մեծ հացկերութիւն , 'ի
պատիւ կայսերական գործակալ Գապուրի Էֆէնտիին :

Այս պարահանդէսը , որ ներկայ էին բոլոր հիւպա-
տաները հանդերձ իրենց ընտանեօքը , քաղաքիս գլխա-
ւոր պաշտօնատարները և ուրիշ շատ երեւելի անձինք ,
ըստ ամենայն մասանց չքիչ կերպիւ և ըստ եւրոպական
սովորութեան կատարեցաւ 'ի մեծ գոհունակութիւն բո-
լոր հանդիսականաց :

—Սղեբանդարիսայն կը գրեն մեզ թէ Մեծին Բրիտա-
նիոյ դեսպան փոխմարտիւ սըր Հինրի Պիւլլըքը՝ ամսոյս
24ին երկուշաբթի օրը՝ անդղկական պատերազմական շո-
գենաւով մի , յիշեալ քաղաքին մեկնեցաւ Կոստանդնու-
պոլիս փրադատնալու համար :

—Յարգոյ քիւր Բաշնօֆոն Լաթի մեքենադործ ճար-
տարապետը , որ 8 տարիի չափ Գերմանիոյ մէջ այս ար-
հեստին ուսմանը հետեւելով՝ կատարեալ կերպիւ սովորած

է զայն , իւր ծառայութիւնը կը մատուցանէ յարգոյ հա-
տարակութեանը՝ ճարտարապետութեան վերաբերեալ
ամեն գործերու և ամեն շինութեանց համար ,

ՇԱՆՈՒՅԻՄ

Այսրեւի երկարուողոյն բաժանորդ գրողներուն
իմաց կըտրուի քէ ցերեկայ ազգարարութեան հրա-
տարակութեան միջոցէն 21 օր , ով որ իրեն ինկած
բաժինը ջնատուցանէր , նոյն բաժինը՝ ըստ պայմա-
նագրութեան երկարուողոյն կառավարեացը , ցնկե-
րութեան կողմէն պիտի գրաւուի , հետեւաբար ,
յիշեալ երկարուողոյն բաժանորդութեան ամեն իրաւ-
ունքին պիտի գրկուի :

ԶԱՐԲԱՆ ԱԼԻ ԴԵՂ ՄԸ



Սպեղանի Թափայի Հոգեւոր :

Արեւն թէ մարդկային մոաց ամեն արտադրութիւնները
ժամանակ մը տեւելէ ետեւ , նոր գիւտեր անոնց տեղը կը բռ-
նեն : Բայց այս խօսքը այս դեղին շէքերէրէր . վանդի օր-
ուան մը համար չէ այլ մշտապէս և անոր ներգործութիւնը .
ըստորոգէ՛ արեւան մէջ եղած հիւանդութեանց արմատները
կը ջնջէ և բժշկութեան արհեստն ալ անկէջ աւելի բան մը
չկրնար ձեռք բերել : Այս սպեղանին մոյշն և մարմնոյն
մանրամթերուն մէջն անցնելով , ինչպէս որ ջուրը ծակից
բանէ մը կանցնի , կերթայ կը ջնջէ խոյլ պարանոցի , օձիկ ,
ոււոյցք և քաղցեղ ըստուած ակտերուն արմատը , նմանապէս
գեղջ վերաց և պալարներու մնացորդաց որ արեւան ջրաբերու-
թիւնը կաւրեն , և անոնց ապականութիւնը անհետ կընեն :

Ցաւ սրունից :

Հոլոսեւի սպեղանին ամեն դէպքերու մէջ կը բժշկե-
սրունից (պարոք) ցաւերը թէ և քան տարուան ըլլայ : Որ-
չափ կարծր գունամափ և ուռեցած ըլլայ մարմինը , այս անոր
չկրնար դիմանալ , եթէ յիշեալ սպեղանին օրը երկու անգամ
առատապէս դրուի ցաւած տեղը և աղիկ մը շփուի : Յետո-
յոյն սպեղանին լաթի մը վրայ շառկեկ քսելով ցաւած տեղը
ծածկելու է : Այս կերպիւ եթէ շարունակ հոգ տարուի ,
վատաւորջ հիւթերը դուրս կընեն . վերջերք քիչ ժամանակ
ուսան մէջ յարմարաց անտի կը բժշկուին և սրունից միւս մա-
սերը իրենց բնական երեւոյթը դարձեալ կը ստանան :

Հին վերք , խոց և քաղցեղ :

Խոյլ պարանոցի , և ուրիշ խոցերը , որչափ և հնացեալ
ըլլան , շուտով կը բժշկուին Հոլոսեւի սպեղանին և դեղա-
հատերը գործածելով : Այս դեղին ներգործութիւնը պա-
շտաց և շարաւանք քաղցեղաց վրայ գրեթէ հաշտալի է .
բանդի աղի բերանը անոնց վրայն կը հանէ զիշերը որ զետեղ
կը բանցընէ միշտ . և հետեւաբար կը բժշկէ զանոնք :

Կծկու միջոց և կարծրութիւն 'ի յօդաւա-
րութիւնս (օյնաք եւրի) :

Այս անտերն ևս շուտով կը բժշկուին Հոլոսեւի սպե-
ղանով . որ իւր ներգործութեամբ երեւելի հանգիստացա-
նաւ անգամաւորեցութեան շատ դէպքերու մէջ :

Տեւտուտութիւն :

Այս սպեղանին տեւտուտութեան (մայաքը) ամենէն
տանգաւոր դէպքերը կը բժշկէ , եթէ գործածեն զայն՝ ինչ-
պէս որ պատուիրեալ է ծանուցագրոյն մէջ :

Մորթային հիւանդութիւնք :

Խտուտարանները (գապարձք) , չոր ուրտաքս յորձմուր մեքը
և մորթոյս մորթիւն ամեն գրգռութիւնները աներն ուր կը լիւն-
քանի մը անգամ այս սպեղանին քսելով : Դուրս տալու սովորա-
բար արտաշնութեան պակասութեան կը բաժնաւորուի : Ըստաղու-
այս սպեղանին ներս մտնելով կը բանայ սնմանայ՝ մորթոյն ծակ-
տիւր և կը ջրուէ զորոքութիւնը՝ սա կերպիւ հիւանդութիւնը ան-
հետ կընայ : Այն տիկինները , որոց եղիւսը և բարեկեցութիւնը
զայեալ են մորթային հիւանդութիւններով , կրնան ամօքնապա-
նիշ զորաւոր դեղը գործածելով , շուտով անհետ ընել նոյն աղ-
գեղութիւնները և գործածաւ ձեռք բերել մորթոյն բնական գոյնը
և կարեւորութիւնը :

Այս սպեղանին յատկապէս օգտակար է հետեւեալ անոնցը .
Ոււոյցք . Գաղցեղ (չիբեքէն) : Կարուածք . Գերլուսն
կամ կծկու մի միւսանց կամ ջրաց (սինիլ չէքիլմէս) : Կոլո-
ոտից (նաւը) : Խօթութիւնը մորթոյն : Յօդաւառութիւն .
Խաղաւարտ (չպան) : Ջրօղորդութիւն (սըսգա) : Ներքերան
և լայնախոր վերք (ֆիսթուլ) : Ուստացաւութիւն (նիգրիս) :
Սերմնակաթութիւն (պէլ և օվուրլուդու) : Բոս և Լեռնի
հիւանդութիւնք : Խոյլ պարանոցի : Ցաւ պարանոցի : Ափ-
սպիտեան անոթ : Դուր ցաւագին (թիք սուլուրեօ) :

Այս սպեղանին , որ կը լիւնուի նոյն իսկ հնարօղին անձ-
նական վերակացութեամբ՝ անոր ընդհանուր գործարանաց
մէջ , կը ծախուի 'ի լոնտոն ՍԷՐԷԿ կը լուծուի Թաղ թիւ 244 .
և 'ի Նոր Եւրոպ Մայիսին Լէն Թաղ թիւ 80 : Իսկ ուրիշ եր-
կրները , իւր գործակալաց քով կը գտնուին . որոց անունները
հետեւեալներն են . Իսկիլ , Իբար Գրեթ , Կ . Պօլս , Լեռնի
Սմաթու և Ֆ . Տեւտուտ . Ալէքսանդրիս Գ . Բերրիս ,
Իսմաիլ Կալլարիս , Բիւս կը լիւն շէ՛ Սեկերովիչ , Մալմա

Խոյլաղիլ — Խոյլ լրագրոյն ,

Դ . Պալա . Դ . Պալապալեան :

ԻՏԳԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՄԻՔ ԱՐՄԱՐՏԵԹՆ